

Յաղթութիւնը մեծ էր, թշնամեաց բանակը ոչնչացէք էր եւ իւր մնացորդքը Կարնո՛յ հզօր պարիսպներու շնորհիւք կը մնար, ամենքը յաղթութեամբ արբեր էին, ուրախութեան երգեր՝ սրինգ եւ տաւիղ երկինք կը բարձրանային, մեծ եւ փոքր, զօրապետ եւ զինուոր, Յայաստանի հիւսիսն եւ հարաւը, արեւելք եւ արեւմուտք եւ մինչեւ Փոքր Յայոց բնակիչք ներկա էին, եւ զիրար կը տեսնէին օտարին դէմ, հարստահարողին դէմ, կրօնից եւ խղճմտանքի բռնաբարողին դէմ միաբան: Զոն՝ տարիներով բաժանեալ ծանօթք, բարեկամք եւ մերձաւորք իրարու հանդիպած՝ իրարու հետ գրկախառն եալ հին ատելութիւններ կը մոռնային, սերը կը նորոգէին, եղբայրութիւն կը հմսստատէին. ամեն մարդ գոհ էր եւ զուարթ: Միայն մարդ մը անթափանց ամեն ուրախութեան, թշնամի արեամբ ներկուած, քրտինքը ճակատը, փոշիով ծածկուած, դեռ ձիւն չէր իջած. ամեն կողմ կը դիմէր, մեռելները թաղման կը պատրաստէր, վիրաւորները գիւղերը բաժնել կ'ուտար, եւ բանակին՝ պահապանաց խումբեր կը որոշէր: Այդ մարդը Թեոդորոսս Ռշտունին էր:

Կ'ես-գիշերուան մօտ էր, երբ հասաւ Վասակ պատրիկ փոքրը բայց ընտիր բանակաւ, ճիշտ այն ժամուն, որ հայոց իշխանք եւ զօրավարք՝ յունաց սպարապետին վրանին մէջ պիտի ընթերէին: Մեծ ուրախութիւն էր տեսնել հոն, հայոց պատմական ճոխ եւ փառաւոր անուններ կրողները սեղանի մը շուրջ միացած եղբայրաբար. հոն էին Բագրատունիք եւ Արծրունիք, Սիւնիք եւ Մամիկոնյանք, Կ'ամսարականք եւ Ռշտունիք, Աղուանք, Խորխոռունիք, Ամատունիք, Վահեւունիք, Առաւելեանք, վերջապէս ամեն անունք, որ քանի մը ամիս առաջ Թեոդորոսի ամբաստանող եւ գրպարտիչ նաեւ լքնիլ չէին դանդաղէր, եւ անոնք, որ իրեն հետ միաբան բիւզանդացի կայսեր դէմ խիզախէր էին: Նա ամենուն քաջութիւնը գովեց, ամենուն սիրալիր կերպարանք գցուց, ամենուն եղբօր կամ որդուոյ քաղցր անուն տուաւ. բայց դարձեալ ուրախ չէր, այնչափ տարուան ջանք, բանագնացութիւնք, դաշնադրութիւնք ընդունայն գնացած զինք լաւ համոզած էին թէ այդ մարդիկը զօրութեան, լուծի եւ անձնական ողորմելի շահու առջեւ միայն կը խոնարհէին, հայրենասիրութեան, կրօնասիրութեան սկզբունք արմատ չունէին իրենց սրտին մէջ:

Սուրեն եւ Գրիգոր Նոյն օրը պատերազմի դաշտին մէջ զբաղյալ՝ իրար տեսնելու համար ժամանակ չէին ունեցեր, հիմա իրարու քով նստած անցեալ աւուրց թշուառ արկածներու վրայ կը խոսէին, եւ եւ Սուրեն տեսնելով Գրիգորի ուրախութիւնը կը զուարթանար, վասնզի այդ երիտասարդը, որոմս բնական սրամտութիւնը, կորովը զինք գերազանց կ'ընէին իւր ընկերակցաց մէջ, ազնիւ հոգի նաեւ ունէր եւ կը յիշէր իւր քեռուոյն անմոռանալի երախտիքը: Զոն՝ Կ'ամսարական ցեղին մեծ ուրախութիւն էր տեսնել ոչ միայն իրենց եղբայրը,